**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

*0026, Գ.Նժդեհի 23/1, հեռ. 015400210*
*Էլ. փոստ info@probation.am*

N/29.1.5/67318-2025
« 25 » սեպտեմբերի 2025թ.

**«ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ**
**Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ**

*/Ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան,*
*Չեխովի փ., շ16, բն. 10, հեռ.՝ +37455114101,+37455114101 +37455114101*
*+37455114101էլ հասցե՝ pchelper2018@gmail.com/*

**Հարգելի՛ պարոն Նիկողոսյան,**

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կարիքների համար իրականացված տոներային քարտրիջների ձեռքբերման ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ն, որի հետ 2025 թվականի հուլիսի 28-ին կնքվել է ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես 2025 թվականի օգոստոսի 27-ը ներառյալ մասնակիցը ապրանքը չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11-3 ծածկագրով պայմանագիրը 2025 թվականի սեպտեմբերի 25-ից միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ս.թ. 2025 թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես որակավորման ապահովում՝ 16,800.00 (տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ 11,200.00 (տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցել ՀՀ

ֆինանսների նախարարությունում բացված հատուկ գանձապետական 900008000664 հաշվին:

Վերոնշյալի վերաբերյալ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը դիմել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

**Հարգանքով՝**

9/25/2025

ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN ANI 7311890551

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**